ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ԲԱԺԱՆՈՐԴ

Ներտնային գազասպառման համակարգերի գազաֆիկացումը և գազամատակարարման վերականգնումն իրականացվում է «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի մասնաճյուղերի կողմից՝ բնակարանի սեփականատիրոջ (վարձակալի, օգտագործողի) միջոցների հաշվին:

Առանձնատների և բազմաբնակարան շենքերի բնակարանների գազաֆիկացման կամ գազամատակարարման վերականգնման նպատակով «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից սահմանված ձևով դիմումներն ընդունվում են Գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղերում (ԳԳՄ):

- Դիմումի հետ բնակիչը ներկայացնում է անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի կամ վարձակալության իրավունքի գրանցման վկայականի և անձնագրի պատճենները:
- Դիմումում նշվում են գազասպառող սարքավորումների անվանումները և տիպերը:

Դիմումները ստանալուց 14-օրյա ժամկետում ուսումնասիրվում է բնակարանի (առանձնատան) գազաֆիկացման կամ գազամատակարարման վերականգնման հնարավորություններն ու տեխնիկական պայմանները: Բացասական արդյունքի դեպքում գրավոր պատասխանվում է բնակչին, իսկ տեխնիկական պայմանների առկայության կամ հնարավորության դեպքում դիմողի հետ կնքվում է միացման պայմանագիր:

- Միացման պայմանագրով սահմանված նախագծման աշխատանքների վճարումը կատարվում է ԳԳՄ-ի հաշվարկային հաշվին:
- Գազաֆիկացվող բազմաբնակարան շենքերում, որտեղ ըստ տեխնիկական լուծումների աստիճանավանդակներում նախատեսվում է օդափոխության նպատակով տեղադրել դեֆլեկտորներ, յուրաքանչյուր բաժանորդ մատակարարի կողմից նախապես կատարված հաշվարկների հիման վրա վճարում է իր մասնաբաժնի չափով: Վերջինիս արժեքի ամբողջական փոխհատուցումը իրականացվում է աստիճանական կարգով, ըստ բնակարանների գազաֆիկացման:

Միացման պայամանագրերի հիման վրա նախապատրաստվում և հաստատման են ներկայացվում նախագծանախահաշվային փաստաթղթերը:

Պատրաստի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը հիման վրա, անհրաժեշտության դեպքում կատարելով նախահաշվի վերահաշվարկ, կազմվում են շինհավաքակցման աշխատանքների կատարման ցուցակները՝ նշելով դիմողի անունը, ազգանունը, ներտնային գազասպառման համակարգի հասցեն, գազասարքավորումների տիպերը, քանակը, անհրաժեշտության դեպքում նաև ծխաօդատար ուղիների տիպը և քանակը, նախահաշվային արժեքը և ներկայացվում հաստատման:

Ծանուցված բնակիչները՝ պատվիրատուները, համապատասխան անդորրագրերի հիման վրա ԳԳՄ-ի հաշվարկային հաշվին կատարում են շին-հավաքակցման աշխատանքների համար նախատեսված վճարումներ:

Շին-հավաքակցման աշխատանքները կատարվում են տարածքային արտադրա-շահագործական ծառայության գազաֆիկացման և գազամատակարարման վերականգնման տեղամասերի կողմից՝ 10 օրվա ընթացքում:

Ներտնային գազասպառման համակարգերի շին-հավաքակցման աշխատանքների ավարտից հետո կազմվում են կատարողական-տեխնիկական փաստաթղթերը և ներկայացվում են շահագործման ընդունող հանձնաժողովին:

Գազի թողարկման աշխատանքները կատարվում է սարածքային արտադրա-շահագործման ծառայության կողմից՝ կնքելով գազամատակարարման պայմանագիր:

Բնակարանների (առանձնատների) սեփականատերերի (վարձակալների, օգտագործողների) հետ միացման պայմանագիր կնքելու պահից սկսած գազաֆիկացման (գազամատակարարման վերականգնման) և գազաթողարկման աշխատանքների իրականացման համար սահմանվում է 30 օր:

ՀԱՅՌՈՒՍԳԱԶԱՐԴ ARG АРМРОСГАЗПРОМ